DISCLAIMER: As Member States provide national legislations, hyperlinks and explanatory notes (if any), UNESCO does not guarantee their accuracy, nor their up-dating on this web site, and is not liable for any incorrect information. COPYRIGHT: All rights reserved.This information may be used only for research, educational, legal and non-commercial purposes, with acknowledgement of UNESCO Cultural Heritage Laws Database as the source (© UNESCO).

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ

6 հուլիսի 1995 թվականի թիվ 586

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի 1994 թվականի մայիսի 25-ի "Մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման մասին" որոշման, ՀայաստանիՀանրապետության կառավարությունը որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության մշակութային արժեքների պահպանության վարչության (այսուհետեւ՝ վարչություն) աշխատողների թվաքանակը սահմանել 22 հաստիքային միավոր:
/փոփ. 02.04.96 թիվ 208 որոշում/

2. Վարչության ապարատի պահպանման ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության հանրապետական բյուջեի միջոցների հաշվին:

3. Վարչության աշխատողների աշխատանքի վարձատրության պայմանները հավասարեցնել Հայաստանի Հանրապետության նախարարությունների եւ պետական վարչությունների կենտրոնական ապարատների աշխատողների աշխատանքի վարձատրության պայմաններին:

Վարչության պետի պաշտոնային դրույքաչափի հաշվարկման բազմապատիկ գործակից սահմանել 6:

4. Հայաստանի Հանրապետության արդյունաբերության եւ առեւտրի նախարարությանը՝ գիտաարտադրական համալիրի Երեւան քաղաքի Կոմիտասի պողոտայի թիվ 51 հասցեում գտնվող մասնաշենքի 3-րդ եւ 4-րդ հարկերը (15 աշխատասենյակ 471 քառ. մետր օգտակար մակերեսով) անհատույց օգտագործման հանձնել Հայաստանի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարությանը մշակութային արժեքների պահպանության վարչությանը տրամադրելու համար:

(4-րդ կետը խմբ. 26.11.98 թիվ 745 որոշում)

5. Հայաստանի Հանրապետության արդյունաբերության եւ առեւտրի նախարարությանն ու Հայաստանի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարությանը՝ մեկամսյա ժամկետում սահմանված կարգով կնքել համապատասխան պայմանագիր:

(5-րդ կետը խմբ. 26.11.98 թիվ 745 որոշում)

6. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության մշակութային արժեքների պահպանության վարչության կողմից ներկայացված նախահաշվի համաձայն, նրան հատկացնել 2324.2 հազ. դրամ, 1995 թվականի հանրապետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին՝ վարչությանը հատկացված տարածքների վերանորոգման համար: